

ՆԱԼԲՆԴԵԱՆՅԻ ՆՈՐԱԳԻՒՅ ՀՆԱԳՈՅՆ ՆԱՄԱԿ- ՆԵՐԻ ԱՌԹԻՒԻ

(վերջ)

Հանգուցեալի թոռներից մէկը, բժ. Պ. Գառաբաշ, «Մշակի» 1902 թուի 41 և 42 համարներում պատմելով իւր պապի կենսագրութիւնը նորա ծննդեան հարիւրամեակի առթիւ, այդ հանգամանքի վերայով շատ հարեանցի է անցնում, կամ, լաւ է ասել, ամենեին չի յիշում: Սակայն այդ հանգամանքը հանգուցեալ քահանայի կեանքի և գործունէութեան մի շատ էական մասն է կազմում, իբրև նորա բնաւորութեան բնորոշ կէտերից մէկը և իբրև նախապատճառ նորա Պետերբուրգում ապրելու և այնտեղ վերջացնելու իւր երկար, բայց խղճուկ ու վրդովմունքով լի կեանքը, ուստի և կարօտ է մանրամասն նկարագրութեան ու պարզաբանութեան: Մենք իսկապէս չենք էլ հասկանում, թէ ի՞նչով է ղեկավարուել պ. Կարակաշը, մոռացութեան տալով իւր կենսագրական յօդուածում իւր պապի կեանքի այդ կարևոր հանգամանքը: Նա չէր կարող այդ չիմանալ, որովհետև անպայման լսած կլինէր դորա պատմութիւնն իւր ծնողներից, չէր կարող կարևորութիւն չտալ դորան, որովհետև, ինչպէս արդէն ասացինք, դա մի շատ էական բան է և դորանից կախուած են եղել հանգուցեալի կեանքի յետագայ հանգամանքները: Մենք կարծում ենք, որ նա դիտութեամբ լուութիւն է պահել այդ մասին, չկամենալով այդ պատմութեամբ մի ստուեր ձգել իւր նկարագրած իւր կոչման արժանի հոգևորականի, գրական արժանաւոր տաղանդի և հասարակական գործիչ եղած մարդու պայծառ պատկերի վերայ ¹⁾:

«Լուամայ» № 1.

¹⁾ Պ. Կարակաշն իւր լուութիւնն այդ մասին ժամանակաւոր է համարում, մինչև որ հրատարակուի իւր պապի ինքնակենսագրութիւնը: Մենք դորա դէմ կասենք, որ ի զուր է և այդ ժամանակաւոր լուութիւնը, որովհետև, նախ, մենք չգիտենք, թէ երբ կտպագրուի այդ ինքնակենսագրութիւնը, երկրորդ, եթէ տը-

Մեր կեանքում շատ այդպիսի պատմական դէպքեր և զրական ու այլ ասպարէզներում գործող անձանց կեանքը բնորոշող հանդամանքներ մուսացութեան են տրուում, ժամանակին դրի շառնուելով, ժամանակին զիտակցաբար թէ անգիտակցաբար անուշադիր թողնուելով և բարձի թողի առնուելով: Եւ այդ շատ հասկանալի է. մեղանում միևնույն նիւթի մասին շատ մարդ չի գրում—մէկ, երկու, յաճախ միայն մէկը, և վերջացաւ: Եւ եթէ դոքա էլ կամայ թէ ակամայ անգիտանում են յայտնի դէպքեր իւրեանց գրուածներում մէջ բերելու, բնականապէս շուտով այդ բոլորը ժամանակակիցների ասպարէզից հեռանալովը, վախճանելովը մոռացուում է և մնում է միայն թերի գրուածքը, որով յետագայում անկարելի է լինում յաճախ լուսարանել ամենատարրական բաները մեր կեանքում մէկի գործունէութեան մէջ:

Պատկանեանցի ժամանակակիցները, որոնք բոլորեքեան էլ լսել ու տեղեակ են իւր ժամանակ մեծ աղմուկ հանած հետաքրքրական գործի հանդամանքներին, մէկ-մէկ քաշուում, հեռանում են կեանքի ասպարէզից, իւրեանց հետ գերեզման տանելով եղածը, կատարուածը, և շուտով կհասնի այն ժամանակը, երբ այլ ևս մարդ չի մնալ, որ յիշէր կամ ականատես եղած լինէր անցած-գնացածին: Ահա ինչու համար մենք շտապում ենք այստեղ, օգտուելով դէպքից, մէջ բերելու Տէր-Գարբիէլ քահանայի կեանքում տեղի ունեցած այդ նշանաւոր հանդամանքը, առնելով ականատեսների և գործող անձանց շատ մօտ և մտերի մարդկանց պատմածներից:

Պատկանեանցի և Պալիբի յարաբերութիւնը, պատմում են ժամանակակիցները, շատ լարուած էր և թշնամութիւնն ու ատելութիւնն երկու կուսակցութեան մէջ իւր զարգացման գագաթնակէտին էր հասել: Պատկանեանցը մտածում է սպանել տալ Պալիբին և այդպիսով վրէժխնդիր լինել այն բոլոր զրկանքների համար, որ հասցրել էր նորան մինչև այդ ժամանակ Պալիբը: Նա գնում է Ալեքսան աղա Ալաջալեանի մօտ և խնդրում է նորանից ձեռացափոխ մի վաթսուս ուռբլի և ստանալով այդ գումարը, միտքն է դնում դորանով զլուխ բերելու իւր մտածածը: Նա կոչում է իւր մօտ խասաբ Պաշուկի Բաբաշին և Սողիկի Բառփուշին, քաղաքում յայտնի սրի-

պազրով է, շատ կասկածում ենք, որ նա կարողանայ պարզել մեզ ճշմարտութիւնը. նա անկասկած կլինի միակողմանի և ջտապովական մի բան, ուստի և անկարող պարզելու զքահանայի զլիսին եկած մեծ դժբաղտութիւնը:

կաներից երկուսին, յայտնում է նոցա իւր խորհուրդը, խոստանալով նոցա մի որոշեալ գումար, եթէ նոքա համաձայնեն կամ ինքեանք կամ ուրիշների ձեռքով սպանել Սալիբին: Նոքա էլ սիրով յանձն են առնում կատարել և ժամանակ են խնդրում, որ կարողանան ընկերակիցներ գտնել և ամեն բան կարգի դնել, և ստանում են դորա համար հարկաւոր գումարը: Կուրս գալով քահանայի մօտից, սրիկաներն ուղղակի գնում են Սալիբի մօտ և յայտնում են նորան Պատկանեանցի իրանց յանձնարարածի մասին: Ուրախանում է Սալիբը, որ, վերջապէս, առիթ է ներկայանում իւր թշնամուն թակարդի մէջ ձգելու և սնչացնելու. նա իւր կողմից աւելի շատ փող խոստանալով նոցա, պատուիրում է լուռ կենալ և ամեն բան անել այնպէս, ինչպէս ինքը կհրամայէ: Նա գնում է Տազանրոզի քաղաքապետի մօտ, որի իշխանութեան տակ գտնուում էր և Նախիջևանը, յայտնում է նորան գործի մանրամասն պատմութիւնը և խնդրում է, որ իրան ոստիկաններ տրուին, որ դոքա ծպտեալ ընկերանալով Բարուշին և Քառփուշին, տեղն ու տեղը բռնեն յանցագործ քահանային: Որոշուում է տեղն ու ժամանակը, երբ և որտեղ պիտի պահուէին սրիկաները և Պատկանեանցը պիտի տեսնուէր նոցա հետ, խոստացած փողը հատուցանէր և ոճիրը կատարելու վերջին պատուէրները պիտի տար: Մի մութ գիշեր Պատկանեանցը մենակ լծելով կառքը, գնում է ս. Կարապետի գերեզմանոցը, որ այն ժամանակ դեռ չուէր պարիսպներ, այլ շրջապատուած էր միայն խոր փոսով անասունների մուտքը դէպի գերեզմաններն արգելելու համար, որովհետև այդ տեղն է նշանակուած լինում տեսակցութեան համար և գերեզմանոցի շուրջը քաշուած փոսի մէջ են պայմանաւորուած լինում պահուելու Քառփուշն ու Բարուշն իւրեանց մարդկանց հետ: Հասնելով գերեզմանոց, նա իջնում է կառքից և մօտենում փոսին, որտեղից դուրս են գալիս նորա առաջ ծպտեալ ոստիկանները. նա հանում, հատուցանում է նոցա իւր խոստացած գումարը և սպանութեան գործին վերաբերեալ զանազան պատուէրներ է տալիս. նա, ի միջի այլոց, ասում է «Տեսէք, դուք այնպէս պիտի անէք, որ նա կենդանի չը մնայ. նա շատ կենսունակ մարդ է, կտոր-կտոր արէք նորան»: Այդ խօսքերի վրայ ոստիկանները սուլում են և բորբերեան դուրս թափուելով փոսից, տեղն ու տեղը կալանաւորում են նորան և բերում քաղաք Հայկական Մագիստրատը, որտեղ Պատկանեանցն ընկնելով Սալիբի ոտքերը, ներուճն է աղբսում նո-

րանից, ասելով Ազն, ես արի, դու մի անիր»⁸⁾։

Այսպէս պատմում են ժամանակակիցները, բայց կայ այդ գործի մասին և մի պաշտօնական արձանագրութիւն, որ մինչև ցայսօր պահպանուել ու մեր ձեռքն է հասել։ Այդ արձանագրութեամբ, որի հիման վիրայ սկսուած է եղել գործը Պատկանեանցի դէմ Ռոստովի գաւառական դատարանում, յիշեալ դէպքը պատմուած է այսպէս։ 1853 թուի Յուլիսին Պատկանեանցը կոչուած է իւր ձօտ Կարապետ Իզմայիլցեան անունով մէկին, որ թշնամի էր Պալիբին, և սկսում է համոզել նորան, որ նա գտնէ մի 2—3 մարդ, որ համաձայնեն սպանել քաղաքագլխին, որի համար և խոստանում է 200 ռուբլու չափ մի գումար վարձատրութիւն տալ նոցա։ Իզմայիլցեանը կարծելով, որ քահանան այդ բոլորն ասում է ոչ լրջօրէն, այլ միայն նորա դէպի Պալիբն ունեցած ատելութեան չափը փորձելու, իմանալու համար, առաջին նուազ բացէիբաց հրաժարուած է այդ առաջարկութիւնից, բայց յետոյ տեսնելով, որ նա կատակ չէ ասում, չի փորձում նորան, այլ լրջօրէն միտքն է դրել սպանելու, յայտնում է այդ մասին իւր ծանօթ և բարեկամ Թերզիեանին, որ այդ ժամանակները բանտարկուած էր Մազիստրատի բանտում և տկարութեան պատճառով միառժամանակ տեղափոխուած էր բանտի հիւանդանոցը, որ գտնուած էր բանտից դուրս մի առանձին տան մէջ։

Թերզիեանը շահուելու նպատակով համոզում է իւր մտերմին չհրաժարուել, այլ սուտ կատարողս ձեանալ, իսկ ինքը շտապում է յայտնել այդ մասին Պալիբին և Մազիստրատի այդ ժամանակուայ առաջին դատաւոր Զէյթունեանին։ Ուրախանում է Պալիբը և պատուիրում է նոցա լուռ կենալ և ամեն բան անել այնպէս, ինչպէս ինքը կկարգադրէ։ Նա նոյն ժամանակ գնում է Տագանրոզ քաղաքապետի ձօտ, յայտնում է նորան գործի հանգամանքը և խնդրում է, որ իրան ոստիկաններ տրուին, որ դռքս ծպտեալ ընկերանալով Թերզիանին և Իզմայիլցեանին, տեղն ու տեղը բռնեն քահանային։ Քաղաքապետը հրամայում է Տագանրոզի ժանդարմների գնդի պետ շտաբսկապիտան Բառոն Կլէյստին անյապաղ երթալ Նախիջևան ե ամեն ձեռքից եկած միջոցներով օգնել Պալիբին յանցանքը մերկացնելու։ Նոյն թուի օգոստոսի 10-ին Կլէյստը գալիս է

⁸⁾ Այս պատմութիւնը մեզ արել է նախիջևանցի պ. Յովհաննէս Խաթրանեանը, որ այդ գործի մանրամասնութիւնները լսել ու տեղեկացել է իւր հօրից, Գէորգ աղա Խաթրանեանից, որ Պալիբի մտերմներից մէկն է եղել։

Նախիջևան, տեսնուում է Սալիբի հետ և մանրամասն ծանօթանում նորա կազմած ծրագրին, որով պէտք է գործէին Թերզիկանն ու Իզմայիլցեանը և ինքեանք իշխանաւորները:

Որոշուած է լինում յայտնել Պատկանեանցին, որ աւազակներն արդէն գտնուած են և որ նոցա հետ պայմանաւորուելու տեղ նշանակուած է Ս. Լուսաւորչի գերեզմանատունը, իսկ ժամանակը-օգոստոսի 10-ը, գիշերը: Այդ օրը, նշանակուած ժամին, Թերզիկանը պիտի առնէր իւր հետ երկու ծըպտեալ ժանդարմ և մի մարդ էլ Ռոստովից և երթար, սպասէր գերեզմանատանը, իշխանաւորները պէտք է թազ կենային գերեզմանոցի շուրջը փորուած փոսի մէջ, իսկ Իզմայիլցեանը պէտք է երթար, բերէր Պատկանեանցին: Երբ որ ամեն բան պատրաստ լինէր և Պատկանեանցը գար և փողը հատուցանելու ու զանազան պատուէրներ լինէր, իսկոյն ժանդարմները պիտի սուլէին, ընկնէին նորա վերայ բռնէին և թաք կացած տեղերից դուրս գային իշխանները:

Ամեն բան կատարուում է այնպէս, ինչպէս ծրագրուած է լինում. Իզմայիլցեանն որոշեալ ժամին բերում է Պատկանեանցին, և նա հանում, տալիս է ծպտեալ սրիկաներին 50 ուրբլի, խոստանալով միւս 150 ուրբլին էլ վերջը, սպանութիւնից յետոյ, հատուցանել: Նա բարձրաձայն պատուէրներ է տալիս նոցա, օրհնելով նոցա ձեռնարկութիւնը և ասելով, թէ եթէ չլինէր իւր մօրուքը, այսինքն եթէ ինքը քահանայ չլինէր, անձամբ, ինքն իւր ձեռքով կսպանէր Սալիբին: Այդ խօսքերի վերայ, ծպտեալ ժանդարմները՝ Սիդոր Ստասիկը և Եակով Ալէյսինը սուլում են և ընկնում նորա յետևից բռնում են նորան հէնց այն բողբոջին, երբ նա ուզում է եղել կառք նստել, հեռանալ: Դուրս են գալիս փոսից և իշխանաւորները՝ Բառոն Կլէյստը, Սալիբը, Զէյթունեանը, Մազիստրատի Ստրեապչի Սիմեօնովը և Օհան Զուբարեանն ու Գրիգոր Մահտեսեանը, որոնց իշխանաւորները բերած են լինում իւրեանց հետ իբրև վկայ:

Առաջին նուազ Տէր-Գաբրիէլն աշխատում է իրան անմեղ ու բան չհասկացողս ձեռքները, գործից ոչ մի տեղեկութիւն ունեցողս ներկայացնել, այնպէս որ երբ Կլէյստը հարցնում է նորան, թէ այս ի՞նչ է, նա պատասխանում է, թէ ինքն էլ չըզիտէ: Բայց երբ նորան ցոյց են տալիս նորա տուած 50 ուրբլին և կրկնում են սպանութեան գործին վերաբերեալ նորա տուած զանազան պատուէրները և ասած խօսքերը, Կլէյստն էլ մերկացնում է գազտնիքը, թէ այս մարդիկը հասարակ մարդիկ չեն,

այլ ժանդարմներ, որոնց խօսքերն ու ցուցմունքները դատարանում կընդունուին՝ իբրև ստոյգ ապացոյց, նա խոստովանում է իւր յանցանքը և Սալիբի ոտքերն ընկնելով, գթութիւն է աղերսում: Դոյն իսկ ժամանակ հասնում են գերեզմանատուն և հոգևոր Կառավարութեան անդամները՝ Տէր-Մարտիրոս Թորոսեանը և Տէր-Պօղոս Խոջեանը, որոնց նախապէս իմաց է տրուած լինում գործի մասին, և նոցա սուաջ էլ նա կրկնում է իւր խոստովանութիւնը: ⁹⁾

Իսկոյն բերում են նորան Մաղխատրատ, կազմում են մանրամասն արձանագրութիւն, բանտարկում են նորան առաջ Մագիստրատի բանտում և յետոյ փոխադրում են Ռոստովի բերդը: Գործը, նախ, անցնում է Ռոստովի գաւառական դատարանը, յետոյ Եկատարինսույաւի դատական պալատը և ապա ծերակոյտը, շատ երկարում ու ձգձգւում է և այդ բոլոր ժամանակ Պատկանեանը մնում է Ռոստովի բանտում: Վերջապէս, քահանայի բազմաթիւ ազդեցիկ բարեկամների միջնորդութեամբ 1860 թուին գործը վճռուում է յօգուտ նորա և դատարանը վճիռ է արձակում, թէ որովհետև պակասում են ուղղակի ապացոյցներ Պատկանեանցի յանցաւորութեան, բայց կան շատ կողմնակի փաստեր, որոնք բոլորն էլ վկայում են, որ նա կարող էր և հակումն է ունեցել այդ յանցանքը գործելու, այդ պատճառով էլ ազատելով նորան բանտարկութիւնից, թողնել խիստ կասկածանքի տակ և այդ վճիռը ներկայացնել նորին տէրութեան վեհափառ Կայսեր վերջնական տնօրինութեան: Կայսրը վերահասու լինելով գործի հանգամանքին, այդ վճիռ վերայ մակազրում է. «Հոգևորականին կասկածանքի տակ թողնել չի կարելի, քահանան չպէտք է որ կասկածաւոր լինի»:

Ինչպէս կարելի է տեսնել երկու պատմուածքի համեմատութիւնից, շատ տարբերութիւն դոցա մէջ չկայ. դոքա ընդհանուր և էական կէտերով համաձայն լինելով, զանազանում են միմեանցից միայն մի քանի գործող անձանց անունների տարբերութեամբ և՛ մանրամասնութիւններով: Որ պատմուածքին մենք պէտք է հաւատ ընծայենք աւելի: Ի հարկէ, արձա-

⁹⁾ Այդ պաշտօնական արձանագրութիւնը գտնուում է Նախիջևանի հոգևոր Կառավարութեան գործերից մէկի մէջ, որ կրում է հետեւել մակազրութիւնը՝ «Ընթծ ըստ պահանջման ժամտարակի կոմանտի Ատիճանուտը պարոն Քլէյսթի և տեղոյո Սարեապչիի յաղազս նշանակելոյ առ նսսա զմի օք յանգամոց կառավարութեան վասն գործոյ Գարբիէլ քահանայի Պատկանեան, սկսեալ ի 11 օգոստոսի 1859 ամիս»:

Վերահակութիւն կառավարութեան անդամ Տէր-Պօղոս Պեպելեանին, որ նեղութիւն կրեց այդ գործը գանելու ու յանձնելու մեզ օգտուելու համար.

նազրութեան պատմութեան, որովհետև դա մի գրաւոր յիշատակարան է, որ կազմուած է տեղն ու տեղն ու վկայուած է պաշտօնական անձանց վաւերական ստորագրութիւններով. իսկ առաջինը թէև ժամանակակիցների բերանից դուրս եկած, բայց գրաւոր չլինելով և բերանէ բերան անցած լինելով, անկասկած աղաւաղուել ու շատ կէտերում, մանաւանդ մանրամասնութիւններում, կորցրել է իւր ճշտութիւնը: Սակայն մենք և արձանագրութեան պատմութեան լիովին հաւատ չենք ընծայում, որովհետև դորա շատ կէտերում նշմարում ենք արուեստական և շինծու կտորներ: Սալիբն իւր ժամանակին այնպիսի հզօր ու ազդեցիկ մարդ է եղել, որ ամենքը, մինչև իսկ պաշտօնական անձինք ևս հլու, հնազանդ են եղել նորան և ենթարկուել նորա ազդեցութեան, չենք խօսում արդէն միւս վրկաների մասին, որոնք, ըստ ամենայնի, կամակատար են եղել և արել են այն, ինչ որ միայն հաճելի է եղել հզօր քաղաքագլխին:

Այդ երևում է և այն հանգամանքից, որ և դատարանն իւր բոլոր ինստանցիաներում, չնայելով, որ գործն այնպէս է եղել և արձանագրութիւնն այնպէս կազմուած, որ Պատկանեանցըն անպատճառ պիտի դատապարտուած լինէր քսորանքի Սիրիբրոյ հեռաւոր կողմերը, իբրև յանցանքի տեղը բռնուած և իւր գործելիք ոճիրը խոստովանած քրէական յանցաւոր, ներողամիտ է գտնուել և ազատելով նորան բանտարկութիւնից, թողել է միայն խիստ կասկածանքի տակ: Կարգաւուծութեան խնդիրն այստեղ ի հաշիւ չպէտք է առնել, որովհետև այդ արդէն եղել է նորա հոգևոր կոչման հետևանքը և կայսեր շատ արդարացի հայեացքի արգասիքը քահանայութեան բարձր աստիճանի վերայ: Մի անգամ արդէն դատարանը վճռել էր կասկածանքի տակ թողնել քահանային, դորա հետ միասին պիտի վճռէր և կարգաւուծութեան խնդիրը: Բայց որովհետև նա այդ չէր արել, բնականապէս Կայսրը միայն լրացրել էր դատարանի վճռի թերին, մակագրելով նորա վերայ միայն այն, որ ուղղակի բղրում էր գործի էութիւնից: Ոչ ոք կարող էր հերքել, որ քահանան, Քրիստոսի աշակերտը, եկեղեցու պաշտօնեան, հաւատացեալների խոստովանալորը և աւետարանի բարոզիչը չի կարող և չպէտք է որ կասկածաւոր լինի:

Կայսեր ու ձերակոյտի վճիռը իսկոյն հաղորդում է Եկատարինսուլաւի դատական պալատին, որ իւր 1860 թուի մարտի 25-ին գրուած հրամանագրով պատուիրում է Ռոստովի ոստիկանութեան և զաւառական դատարանին անյապաղ իրա-

դործել այդ վճիռը: Պատկանեանցն անմիջապէս ազատուում է արգելանքից և բերում, յանձնուում է տեղական ոստիկանութեան հսկողութեան, իսկ կարգալոյծ անելու խնդիրը մտնում է հոգևոր կառավարութիւն, որ իսկոյնեւեթ այդ մասին հաղորդագրում է վիճակաւոր ատեանին Թէոդոսիա և հրահանգ խնդրում: Գործը, վերջապէս, համնում է Ս. Էջմիածնի Սիւնհոգոսը, որ ի նկատի առնելով, որ Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմում եպիսկոպոս չկայ, իւր Յունիսի 25-ին գրուած հրամանագրով սահմանում է կարգընկէցութեան կարգը և պատուիրում է ի կատար ածել կայսեր վճիռը կամ Թէոդոսիայում վիճակաւոր ատեանի մէջ, կամ Նախիջևանում հոգևոր կառավարութեան մէջ:

1860 թուի օգոստոսի 2-ին, կոնսիստորիայի յունիսի 23-ին արձակած հրամանին համաձայն, հաւաքուում են Նախիջևանի հոգևոր կառավարութիւնը Նախիջևանի և դորա գիւղերի ամբողջ հոգևորականութիւնը Ս. Լուսաւորչի մայր-եկեղեցու աւագ քահանայ Տէր-Աստուածատուր Շարչիքեանցի հետ միասին, որին յանձնուած էր կարգընկէցութեան ծէսը կատարելու պարտականութիւնը: Բերւում է այդտեղ և դատապարտեալ Տէր-Փարբիէլ քահանան, զգեստաւորուում պատարագչի նման և ամենայն շքեղութեամբ զարդարուում: Ծերակոյտի վճիռը և կայսեր ինքնաձեռագիր դատալինիքը ի լուր դատապարտելի և բոլոր ներկայ գտնուողների կարդացուելուց յետոյ, մօտենում է նորան Տէր-Աստուածատուրը և սկսում է զգեստի ու զարդերի բոլոր մասերը մի առ մի հանել նորա վերայից, ամեն անգամ կրկնելով զբոս հոգևորական և ըստ կայսերական հրամանաց բանամբ ի քէն զիշխանութիւն քահանայագործելոյ և կրելոյ զայս ինչ... յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ խօսքերը: Եւ հրճուր իսպառ մերկացնում են հոգևորական բոլոր զգեստներից ու զարդերից, հազցնում են աշխարհականի զգեստ և արձակում են նորան տուն, համարելով այնուհետև կարգալոյծ եղած:

Թէև Խալիբը շատ անբաւական է մնում, որ, նախ կարգալուծութեան հանդէսն եկեղեցում հրապարակով, բոլոր ժողովրդի առաջ չեն կատարել, երկրորդ, որ նա ապրում է Նախիջևանում և հեռաւոր տեղ չի աքսորուած, ինչպէս ինքը սպասում է եղել, և այդ առթիւ էլ բողոք է ներկայացնում երջանակայիշատակ Մատթէոս կաթողիկոսին, բայց ոչինչ չի շահում. նորան պատասխանում են, թէ կարգընկէցութեան ծէսը կատարուել է, ըստ ամենայնի, համաձայն Սիւնհոգոսի հրահանգին, իսկ Պատկանեանցին քաղաքից դուրս հանելու խնդիրը

հոգևոր իշխանութեան չի վերաբերիլ, այլ մարմնաւոր իշխանութեան, որին և նա կարող է այդ մասին հարկաւոր դիմումներն անել:

Գործն այս դրութեան մէջ մնում է մինչև 1861 թուի վերջերը, և այդ ըրտը ժամանակ Պատկանեանցը ապրում է Նախիջկանում իբրև սոսկ աշխարհական, «Նախիջկանի մեշխանին» և պարապում է ուսուցչութեամբ և քարտուղարութեամբ քաղաքագլուխ Հայրապետեանի մօտ, որ այդ ժամանակներն եկեղեցական գումարները վէճը Խալիբի ու Այվազեանի դէմ վարելու համար կարօտում էր մի այդպիսի հայազէտ մարդու խորհուրդներին և օգնութեան: Եւ այս այսպէս էլ անկասկած կվերջանար, եթէ գոյութիւն չունենար հակախալիբեան կուսակցութիւնը, որ Նալբանդեանցի Նախիջկանից հեռանալովը, Մատթէոս արքեպիսկոպոսի Հաշտարխանի վիճակը տեղափոխուելովը և Պատկանեանցի պատժուելովը, փոխանակ թուլանալու և կազմալուծուելու, աւելի ևս զօրեղանում է, մտնելով Մատթէոս կաթողիկոսի հզօր պաշտպանութեան ներքոյ և հարուստ ու ազդեցիկ Հայրապետեանցին իրան առաջնորդ ընտրելով:

Սկսում է Նախիջկանի Հայրապետեան և Խալիբեան կոիւնների ամենակատաղի շրջանը, Գարբիէլ վարդապետ Այվազեանի և Խալիբեան դպրոցի հիմնարկութեան շրջանը, որին անմասն չեն մնում Նալբանդեանցը Մոսկուայից և Պետերբուրգից մասնաւոր նամակները ու Հիւսիսափայլի միջոցով և Պատկանեանցը Նախիջկանում իւր գրգռեցուցիչ խորհուրդներով, դրդումներով և զանազան գաղտագողի գործողութիւններով: Կատարւում են հետզհետէ ցաւալի դէպքեր. փորձեր են լինում գող հռչակելու Պատկանեանցին ¹⁰⁾, արատաւորելու Խալիբի

¹⁰⁾ Պատկանեանցին գող հռչակելու ձգտումը նորա հակառակորդները կողմից եղել է Նախիջկանում դեռ 40 թուականներէջ, այնպէս որ երբ 1845—6 թուներն եկել ու երկար ժամանակ մնացել է քաղաքում ներսէս կաթողիկոսը, նորա ակնմըն էլ հասցրել են քահանայի հակառակորդները այդ մասին պատած լուրերը: Գաթողիկոսը շատ աշխատել է իմանալ ճշմարտութիւնը, շատ ճիշ է գործ դրել խոստովանել տալու Պատկանեանցին յանցանքը, բայց չի յաջողել: Այն ժամանակներէջ սկսած, ամեն անգամ, երբ կուսակցական կռիւները վերանորոգուել ու տատակացել են, վերստին ու վերստին հրապարակ է նետուել զօրութեան խնդիրը: Մինչև անգամ 1864 թուին, երբ Պատկանեանցն արդէն Նախիջկանից արքայութեան էր, դարձեալ վերանորոգում է այդ խնդիրը և ջանք է լինում, ճիշ է թափում հաստատելու նորա վերայ զօրութիւնը:

Խնդրն այն է, որ 1826 թուին Ս. Էջմիածնի նուիրակ Թովմաս վարդապետը գալով Նախիջկան, բերում է իւր հետ Ս. Խաչափայտի մասը, որ շատ աղաչանքով առնելով նորանից Խաչատուր արդա Խաճաճեանը, դնում է Ս. Համ-
ԼՈՒՄՅԵ

ընտանեկան պատիւը, ցեխ քօբլու աղդեցիկ դիրք ունեցող ջերմ հայրապետական կարակաշեանի երեսին, անպատուելու նորան. քսութիւն, մատնութիւն, դաւ ու խարդաւանանք անդադար յաջորդում են միմեանց, և քաղաքը դառնում է, ինչպէս սովորութիւն էր արել այդ ժամանակները ասել Այվազեանը, «այբ աւազակադ»։ Բայց որ ամենացաւալին է այդ բոլորի մէջ,— այդ բոլորին զոհ է գնում Յովհաննէս վարդապետ Բէկ-Նազարեանը, չկարողանալով տանել իրան հասցրած վիրաւորանքը և յանկարծամահ լինելով։

*
**

Յովհաննէս վարդապետը վաղուց էր որ պաշտօն էր կատարում Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմում. նա երկար ժամանակ եղել էր Քիշինևում, վարել էր կոնսիստորիայի գործերը իբրև նախանդամ վիճակաւոր առաջնորդ Մատթէոսի յաճախակի բացակայելու միջոցներում և հմտացել էր վիճակային գործերին ու լաւ ծանօթացել թեմի ժողովրդի և նորա հաստատութիւնների գրութեան ու հանդամանքներին։ Կոնսիստորիայի Քիշինևից Թէոդոսիա փոխադրուելու միջոցին նա էլ դորա հետ միասին փոխադրուել էր Թէոդոսիա, մտերմացել նոր առաջնորդ Գաբրիէլ Այվազեանի հետ և յարել Պալիբեան կուսակցութեան։ Անձնականապէս նա շատ մաքուր մարդու համբաւ ունէր և վայելում էր թեմի թէ հոգևորականների և թէ աշխարհականների սէրն ու յարգանքը։ Սակայն կուսակցութիւնը, նիդ, անձնական դիտումներով դեկավարուող կուսակցութիւնը ինչպէս սովորաբար եղել ու լինում է մեղանում, չի ճանաչում ոչ անձնական արժանիք և ոչ անհատական երախտիք։ Նա իւր նպատակին հասնելու համար անգթաբար ոտքի տակ է տալիս ամեն բան և ամեն մէկին, որ միայն արդելք է հանդիսանում, խոչընդոտն է լինում նորան։ Հէնց այդ վիճակին էլ հանդիպում

բարձման եկեղեցին, որտեղից և ժամանակ անցնելուց յետոյ, անյայտանում է այն։ Ոչ ոք չի իմնում, թէ ինչ եղաւ, ով գողացաւ, բայց կապածք, մեզ անյայտ պատճառով, ընկնում է է. Տէր-Գաբրիէլի վերայ, որ այդ ժամանակները բահանայազորութիւն է անում եղել Ս. Համբարձման եկեղեցում։

1864 թուին Ս. Լուսուորչի երէցփոխան Գէորդ աղա Խաթրանեանը խաչկալի պատկերները վերանորոգելու միջոցին գտնում է Չարխափան Աստուածամօր պատկերի արծաթազատի տակ խաչափայտի անյայտացած մասը, որի մասին և յայտարարում է առաջնորդութեան տեղակալ Այվազեանին, ակնարկելով, որ Պատկանեանցը գողացել է մասը Ս. Համբարձումից և բերել պահել է ու Լուսուորչում։ Տեղակալը հրամայում է պահել մասունքը զոտութեամբ, մինչև որ վերջանայ Ս. Խաչ վանքի սկսուած վերանորոգութիւնը և այնտեղ դեռ տեղուի սրբութիւնը, որ և կատարում է իւր ժամանակին։

է հանգուցեալ վարդապետն իւր գործունէութեան մէջ Նախի-
ջկանում, ուր նա 1861 թուի Յունուարին ուղարկուել էր իր-
բև յաջորդ Այվազեան վարդապետից:

Հայրապետեանք արդէն իսկ խէթիւ էին նայում նորա վե-
րայ իբրև ջերմ խալիբականի վերայ. այդ պատճառով էլ պէտք
է որ նա շատ զգոյշ լինէր, որ չյարուցանէր այնպիսի խնդիր-
ներ, որոնք ուղղակի շօշափում էին հայրապետեանց շահերը:
Բայց կուսակցականութիւնը կոյր է լինում, և վարդապետը
հէնց այդ տեսակ խնդիրներով էլ սկսում է իւր գործունէու-
թիւնը. նա Եկատարինոսուլաւի նահանգապետի այն հարցմուն-
քին, թէ մնայ Պատկանեանցը Նախիջկանում, թէ ոչ, պատաս-
խանում է բացասական կերպով. նա յայտնում է կամ սլա-
րաստում է յայտնելու իշխանութեան, որ թէև Հայրապե-
տեանցը նախարարի հրամանով իրաւունք չունի խառնուելու
հոգևոր գործերին, բայց դարձեալ խառնում է. նա յարու-
ցանում է հայրապետական Տէր-Գէորգ քահանայ Բալարանեա-
նի ապօրինի կերպով և խաբէութեամբ խաչ ստանալու և կրե-
լու խնդիրը, և այլն և այլն:

Վարդապետի յանկարծամահ լինելու և դորան առիթ հա-
մարուած դէպքի հանգամանքները խալիբեաններն այսպէս են
պատմում: Մ. Թորոս եկեղեցում տիրացութիւն էր անում Մա-
նուէլ անունով մէկը, որ ընդունուել էր այդ պաշտօնի մէջ
Տէր-Գէորգ քահանայ Բալարանեանի միջնորդութեամբ: Դա
բռնում է զողութեան մէջ և բռնադատում է վարդապետից
կամ դուրս զալ եկեղեցուց և իսպառ թողնել եկեղեցական վի-
ճակը, կամ դատաքննութեան տակ ընկնել: Տիրացուի մայրը,
որ յայտնի էր քաղաքում իբրև վատ վարքի տէր կին, երկու
անգամ դիմում է վարդապետին և լալազին խնդրում, որ ու-
ղին չարտաքսուի եկեղեցուց, բայց մերժումն է ստանում: Վեյ-
ջապէս, զալիս է երրորդ անգամ և վարդապետին չգտնելով
տանը, մտնում է ներսի սենեակները և հասնում է մինչև ննջա-
րանը, որտեղ այդ ժամանակ ծառան վառելիս է լինում հնոցը:
Սենեակի սարքն ու կարգն աչքի անցկացնելուց յետոյ, կի՛նը
խնդրում է մի կտոր թուղթ, ասելով, որ կամենում է մի տոմ-
սակ գրել վարդապետին: Մտռան չի տալիս և արտաքսում է
նորան սենեակից, իսկ նա գնում է մի ուրիշ տեղ, գրում է
ցանկացած տոմսակը և բերում, տալիս է ծառային, որ նա
յանձնէ վարդապետին: Երբ որ վարդապետը տուն է վերադա-
նում և կարդում տոմսակը, շատ զարմանում է, որովհետև տոմ-
սակի մէջ կինը գրած է լինում, թէ ես այն նպատա-

կով... որ դու խոստացար ծածկել որդուս յանցանքը. եթէ դու քո խոստումը կատարելու չլինես, բողոքելու եմ քո վերայ առաջնորդին և կաթողիկոսին: Վարդապետի արիւնը գլուխն է տալիս. նա իսկոյն տանում, կարդում է տոմսակը հոգևոր կառավարութեան անդամների առջև և կասկած է յայտնում, որ այդ բոլորը կինը արած պէտք է լինի տիրացուի պաշտպան Տէր-Գէորգ Բալարանեանի ներշնչմամբ ու խորհրդով: Զայրանում է Բալարանեանը և, ինչպէս երևում է, խորհուրդ է տալիս կնոջ կատարելու իւր սպանալիքը— պաշտօնապէս բողոքելու Մագիստրատին, առաջնորդին, թերևս և կաթողիկոսին, որ և կատարում է կինը, և Մագիստրատն էլ պաշտօնապէս քննութիւն է բաց անում, գործին տալով բնաբարութեան մեղադրանքի բնաւորութիւն: Անցնում է 22 օր և 1861 Ապրիլի 11-ին երեկոյեան ժամը 8-ին յանկարծամահ է լինում Յովհաննէս վարդապետը: Այդ օրը, ուրբաթ երեկոյեան, հանգուցեալը գնացած է լինում ժամ և այնտեղից էլ վերադարձած տուն Գրիգոր վարդապետ Աղափիրեանի և Տէր-Շղիա Շարշնիկեան քահանայի հետ: Թէյ խմելուց յետոյ, յանկարծակի վեր է կենում տեղից և ասելով, թէ «ցաւս ելաւ», վայր է ընկնում հիւրերի առջև, և մինչև բարձրացնում, տանում են ննջարան, հոգին աւանդում է:

Այվագեանը, որ 1861 թուից դեռ շատ առաջ սկսել էր ամբաստանութեան բնաւորութիւն կրող զանազան թղթեր գրել նախարարութեան Պետերբուրգ, գեներալ-նահանգապետին Օդեսսա և Եկատարինոսլաւի նահանգապետին, բողոքելով Հայրապետեանցի վերայ, Յովհաննէս վարդապետի մահով համբերութեան բաժակը լցուած է համարում. նա հակառակ կուսակցութեան իւր և Սալիբի դէմ ուղղած բոլոր թշնամական գործողութիւնները վերագրելով Նալբանդեանցին, Հայրապետեանցին և Պատկանեանցին, աշխատում է նախ և առաջ դոցա ոչնչացնել: Նա թուղթ թղթի վերայ է գրում իշխանութեան, աշխատելով իշխանաւորների սրտում հաստատել այն համոզմունքը, որ քանի որ դոքա վայելում են ազատ գործելու իրաւունք— Հայրապետեանցը քաղաքագլուխ է, Նալբանդեանցը հեռուից իւր գրուածներով ղեկավարում է կուսակցութեան գործերը և Պատկանեանցն ազատ ապրում է Նախիջևանում և ամեն ձեռքից եկած միջոցներով պղտորում է մաքերը, Նախիջևանի կոիւնները չեն դադարիլ, վերջ չեն ունենալ:

Վարդապետ-առաջնորդի գրութիւնները վերջիվերջոյ ու-

նենում են իւրեանց ազդեցութիւնը: Քաղաքագլուխ Հայրապետեանցը նախարարութեան հրամանով պաշտօնապէս յանդիմանութիւն է ստանում նահանգապետից, նալքանդեանցը բանտարկւում է ¹¹⁾, իսկ Պատկանեանցն արտուում է Վեստկա, որտեղից փոխադրւում, տարւում է Պետերբուրգ միայն իւր ազդեցիկ բարեկամների շնորհիւ: Պ. Կարակաշը իւր կենսագրական յօդուածում չի շօշափում, չի յիշում և իւր պապի ազատուելու և կրկին քահանայագործելու իրաւունք ձեռք բերելու հետաքրքրական հանգամանքը, որ նոյնպէս շատ կարևոր է: Մեր ձեռքին գտնւում է հանգուցեալ Պատկանեանցի մի շատ շահեկան նամակը, որ կատարելապէս լոյս է սփռում այդ թէև մեզանից մի 25—26 տարի առաջ կատարուած, բայց մինչև ցայսօր դեռ վարագործի տակ մնացած ու գրի չառնուած հանգամանքի վերայ ¹²⁾:

1866 թուից ապրելով Պետերբուրգում, Պատկանեանցը չի թողնում իւր սիրելի պարապմունքը—գրականութիւնը. նորա այդ ժամանակամիջոցի գրուածների մէջ նշանաւոր է լինում իւր ինքնակենսագրութիւնը, որ տակաւին լոյս տեսած չէ տպագրութեամբ, և մի փոքրիկ բանաստեղծական գրուածք «Մրմունջ» խորագրով, որ նա տպագրում է Նախիջևանցի Սիմաւոն աղա Ալաջալեանի ծախքով ի յիշատակ նորա հանգուցեալ Ստեփան որդու: Ահա այդ փոքրիկ գրուածն էլ հէնց լինում է նորա քահանայութեան վերադարձման սկզբնապատճառը:

Մրմունջը հասնում է Պօլխ, կարդացւում է սիրով և լաւ ընդունելութիւն է գտնում ամեն տեղ: Կարդում է այդ գրուածքը, ի միջի այլոց և հանգուցեալ Ներսէս պատրիարքը, որ, ինչպէս յայտնի է, այդ ժամանակները, այսինքն 75—76 թուերին, սկսել էր մեծ հռչակ վայելիլ ամեն տեղ թէ իւր հօտի մէջ և թէ կառավարչական շրջաններում: Հաւանում է նա

¹¹⁾ Մեր ընթերցողներին թիրիմացութեան տեղիք չտալու համար, մենք այստեղ պարտք ենք համարում մեկնել, որ նալքանդեանցի բանտարկութիւնն եղել է ոչ միայն Ալազեանի նորա մասին տէրութեան գրած թղթերի հետեւանքը, այլ և շատ համազումար հանգամանքների արդատիք: Այդ մասին մենք դարձեալ հաստատ ենք մտում այն կարծիքի վերայ, որ միանգամ արդէն շատ տարի առաջ յայտնել ենք մեր «Նալքանդեանց» գրքում: Մենք այստեղ միայն կամենում ենք ասել, որ Ալազեանի գրածները նորա մասին մի խոշոր տեղ են գրաւում նորա կալանաւորուելու ու բանտարկուելու դժբաղտ գործի մէջ:

¹²⁾ Այդ նամակը Ալազեանի մի շարք հետաքրքրական նամակների հետ միասին մենք ստացել ենք Պ. Յովհաննէս Խաթրանեանից, որին և յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը:

բանաստեղծութեան և հարցնում է, թէ, «՞հար է այժմ այդ Մրմունջին գրողը, Էր է նստեր և Թնչ պատճառաւ ձայն չի հաներ»: Շրջապատողները պատրիարքի այդ խօսքերը անյասպաղ հասցնում են Պատկանեանցի ականջը և յորդորում են նորան մի նամակ գրելու և խնդրելու նորա միջնորդութիւնը Ռուսաց տէրութեան առջ, որ և նա շտապում է կատարել 1875 թուի հոկտեմբերի մէկին: Պատրիարքը ստանալով նամակը, գրում է այդ մասին Պետերբուրգ Ռուսաց ներքին գործոց նախարարին և Ս. Էջմիածին Սրբազան կաթողիկոսին: Վեհափառն իւր կողմից նոյնպէս դիմում է ներքին գործոց նախարարին, սա էլ պատրիարքի և վեհափառի միջնորդութիւնը յանձնում է արդարադատութեան նախարարին, իսկ այս վերջինն այս անգամ, 1876 թուին, խափանում է գործը:

Պատրիարքը տեղեկութիւն ստանալով, որ իւր և վեհափառ կաթողիկոսի միջնորդութիւնը մնացել է անհետեանք, դիմում է մի առանձին աղերսագրով կայսեր Իգնատիեւ դեսպանի միջոցով, և աղերսագիրը մտնում է խնդիր ընդունելու յանձնաժողովը՝ որ չիմանալով, թէ Պատկանեանցը Պետերբուրգումն է, գրում է Ս. Էջմիածին և հարցնում է, թէ ՞իվ է այդ Պատկանեանը: Վեհ. Մակար կաթողիկոսը պատասխանում է համաձայն այն գրութեան, որ նա արդէն մի անգամ գրել էր այդ մասին նախարարին, և սկսում է մի երկար գրագրութիւն նախարարի, կովկասի փոխարքայի և Սկատարինոսլաւի նահանգապետի մէջ և, վերջապէս, գործը վերստին անցնում է արդարադատութեան նախարար Կոմս Պալէնի ձեռքը:

Մինչ այս մինչ այն ծագում է Ռուս-տաճկական պատերազմը, որի հետեանքը լինում է ազգային խնդրի արծարծուիլը, որի համար ուղարկւում են Եւրոպա Խրիմեան Հայրիկը և Խորէն Նարբէյը: Պատկանեանցը տեսնելով, որ պատերազմի պատճառով իւր գործը մնում է, կրկին դիմում է Պատրիարքին և խնդրում, որ իւր գործը յանձնուի Խորէն Գալֆայեանին, որովհետեւ նորան էր յանձնուած լինել Պետերբուրգում: Մինչև որ այդ նամակի պատասխանը ստացւում է, Բերլինում համախմբուում է վեհաժողովը, Խորէնը զնում է Բերլին և Պալէնը փոխւում է ու նորա տեղ արդարադատութեան նախարար է հաստատուում է Նաբոկովը:

Խորէնը վերադառնում է Բերլինից 1878 թուի օգոստոսի 2-ին և 31-ին տեսակցութիւն է ունենում Պատկանեանցի գործի մասին Նաբոկովի հետ, որ խոստանում է

համաձայնութեան թուղթ գրել և գրուած էլ է այդ թուղթը սեպտեմբերի 8-ին: Սեպտեմբերի 16-ին, երբ յանձնաժողովը պիտի ղեկուցանէր կայսեր, ստացուած է պատրիարքից մի նոր աղերսագիր կայսեր անունով իշխան Լաբանով-Ռոստովսկիի ղեսպանի միջոցով: Այդ ժամանակ ան Թանձնաժողովը հաւաքելով այդ գործի մասին եղած բոլոր գրագրութիւնը, ի միջի ալոց, և երջանկայիշատակ Մատթէոս կաթուղիկոսի 63 թուին այդ մասին գրած թուղթը, որ պահել էր փոխարքայի դիւանատունը, ուղարկուած է կայսեր, որ և քննելով գործը, հոկտեմբերի սկզբին ներման վճիռ է արձակուած, հրամայելով վերադարձնել Պատկանեանցին քահանայութիւնը: ¹³⁾

* *

Ի՞նչ եղաւ Մկրտիչ վարժապետ Եկեանեանի դպրոցը — նա թէպէտ կաթուղիկոսի պաշտպանութեամբ և Պալիրի հովանաւորութեամբ պահեց իւր գոյութիւնը մինչև վարժապետի մահը, բայց իշխանութիւնից միշտ փակուելու վտանգի մէջ լինելով,

¹³⁾ Մեզ չափազանց զորմացնում է մեր հոգեւր բարձր իշխանութեան ներկայացուցիչների զործողութիւններն այդ գործում: Այն ժամանակ, երբ մեր կեանքում այնպիսի հրատապ խնդիր է վճռուելիս եղել, ինչպիսին Բերլինի վեհաժողովին էր, մեր կաթուղիկոսը, պատրիարքը և նուիրաբը ժամանակ են դառն թղթեր ու աղերսագրեր գրելու կայսեր, ղեսպաններ մէջ ձգելու, քաղաքական քննադրութիւն կրող բանազնացութիւններ անելու մեծամեծների հետ մի փոքրիկ, շնչին գործի վերաբերմամբ: Մենք շնք հասկանում, թէ ի՞նչ շահ ունեցանք մենք, որ Պատկանեանցը վերստացաւ իւր քահանայութիւնը, կամ ի՞նչ վնաս կար, որ նա մնար աշխարհական: Բայց ճիշտ խօսք ու զրոյց, ճիշտ գրագրութիւն է եղել, մինչև որ իրազործուել է պատրիարքի յարուցած խնդիրը: Արժէք գործն այդ շնորհին արժանանալու համար գործ գրուած մեծ աշխատանքին. և այդ առաջին դէպքը չէ մեր պատմութեան մէջ:

Այդ գրագրութիւնների ժամանակ 1877 թուին, ի միջի ալոց, հարցրել են և Նախիջևանի հոգեւոր կառավարութեան Պատկանեանցի վարք ու բարքի մասին նորա կարգընկէցութիւնից յետոյ: Պառավարութիւնն էլ իշխանութեան հարցմունքին բաւարարութիւն տալու համար, զիմել է քահանաներին, առաջարկելով ամեն մէկին գրելու այդ մասին իւր իմացածը: Սակայն քահանաներից ոչ ոք մի դրական պատասխան չի տուել բացի Ս. Լուսաւորչի: Տէր-Նիղայ առաջ քահանայ Զարոնիքեանից, որ զբել է. «Առ հարցումն հոգեւոր կառավարութեանդ ի 19 ապրիլի համար 152 ի մասին կարգընկէց Գաբրիէլ Պատկանեանց, ունիմ պատիւ պատասխանել: Պատկանեան յետ կարգընկէց լինելոյն յամի 1860 գտանէր ի Նախիջևան ընդ հսկողութեամբ բօլիքիային իշխանութեան, և ի սմին միջոցի որչափ և եկաց պարապէր մանկավարժութեամբ, սակայն քաղաքական զուտ չայրապետեանցն որ վարէր վճ ընդ սրբազան առաջնորդին, դրածածէր զնա իբրև գրագիր, և Պատկանեան գտեալ միջոց զանազան խոսվութիւնս յարուցանէր ի մէջ աշխարհականաց և հոգեւորականաց, և ուսուցչութիւն նորա էր բոլորովին հակառակ եկեղեցական կանոնի և հաւատոյ ի վնաս

հակառակ կուսակցութեան անընդհատ հալածանքներին ենթարկուած լինելով, չկարողացաւ առաջ գնալ ու զարգանալ: Այդ դէպքում դպրոցի առաջադիմութեան վերայ ազդում է, բացի վերոյիշեալ գլխաւոր պատճառներից, և իւր վարժապետի անձնաւորութիւնը, իբրև աղայասէր և շողոքորթ մարդու, որ ամեն մի քիչ թէ շատ հասկացող Նախիջևանցու յետ էր մղում նորանից, չնայելով, որ վարժապետը ամեն միջոց գործ էր դնում ամենքի սիրտը շահելու, և նորա բռնած ուղղութիւնը, իբրև սքօլաստիքի, որ արդէն անցեալ դարի երկրորդ կիսից սկսել էր շատերին բաւականութիւն չտալ:

Մեր ձեռքին գտնուում են վարժապետի մի շարք ձեռագիր գործերը, որոնք բոլորն էլ այնպիսի նիւթ են պարունակում իւրեանց մէջ, այնպիսի համ ու հոտ ունին, որ չպէտք է դիւր գային շատերին, գրաբառ քերականութիւններ 11 հոլովմունքով, քաղաքավարութիւն, համառօտ յայտարարութիւն թուականաց այլ և ազգաց յիշատակելոց ի մատեանս Հայոց, ընդօրինակութիւն յայտնի «Սքանչելի գաղտնիք մեծին Ալպերտի» գրքի, թուարանութիւն գործնական և ուսումնական, բնագննութիւն կամ բնութեան հանգամանք մարդկային, հրահանգ ի հաստատութիւն դպրոցաց ըստ եղանակի փոփոխ դասատուութեան (թարգմանութիւն ռուսերէնից), համառօտութիւն քաղաքական և ուսումնական աշխարհագրութեան, նկարագրութիւն, բարեկամ տղայոց (թարգմանութիւն ռուսերէնից) որոնցից մի քանիսը գործ են ածուել իբրև ձեռնարկներ, մի քանիսըն էլ իբրև ընթերցանութեան գրքեր իւր մասնաւոր կամ, ինչպէս ինքը վարժապետն ասում է, «առանձնական» դպրոցի աշակերտների համար: Հասկանալի է, որ Ալպերտը, բնագննութիւնը, քաղաքավարութիւնը, այդ իւր տեսակի բոն-տոնը, և այլ այդ տեսակ ընթերցանութեան գրքերը չպէտք է կարո-

ղեռահատ մանկանց, վաճառորդ յորժամ եկն ի քաղաք սրբազան Առաջնորդն վիճակիս Գարբիէլ Արքեպիսկոպոսն Ալվազեանց, հասու եղև վասն ամենայն ամբարշտութեանց և վնասակարութեանց նորին Պատկանեանի և զկնի ստուգելոյ զայնմ ամենայնէ ի յաշխարհականաց և ի հոգևորականաց և ճանաչելոյն զնա վնասակար ժողովրդեան և եկեղեցւոյ, առաջի արար զայմանէ առ նախարարութիւն ներքին գործոց յաղափս բաճախոյ զնա աստի իբրև վնասակար անձն, որ և յետ միջոցի յամի 1861 ի յանակնկալ պահու հրամանագրութեամբ Եկատարինաստու գաւառապետին Պատկանեանն ժանդարմի առաքեցաւ յարսոր ի կողմանս Սիպիլու ի քաղաքն Վեաքթա, զառաքելոյս կարելի է իմանալ ի սրբազան Առաջնորդէն որ այժմ ի Թիֆլիզ է, և յայնժամեան Անդամոց հոգևոր կառավարութեան, և ի քահանայից որք տուեալ էին զզբաւոր ստորագրութիւն ինքեան սրբազան Առաջնորդին»:

դանային մտաւոր պաշար հայթայթել աշակերտներին, գրաւիչ լինել նոցա համար և զարգացնել նոցա գրական ճաշակը: ¹¹⁾ Սակայն արդարութիւնը պահանջում է ասել որ «առանձնական դպրոցը» շատ է նպաստել հայկական գրաճանաչութեան տարածուիլուն Նախիջևանցոց մէջ, այնպէս որ նորա աշակերտներից շատերն այնքան իմացել են հայոց լեզուն, որ կարողացել են հասկանալ թեթեւ գրութեանը և ինքեանք ևս կարողութիւն են ունեցել աղճատ գրաբառով նամակներ գրել և ստացածները կարդալ, հասկանալ:

Սալիբն այնքան հովանաւորել է վարժապետին, որ, ըստ նորանից, որ չի թողել նորա դպրոցը փակեն, այլ և նորան գեղադրութեան ուսուցիչ է կարգել տուել տեղական արքունի դպրոցում, և մինչև իսկ միտք է ունեցել նորան տեսուչ կարգելու այնտեղ, բայց ինքը վարժապետը հրաժարուել է այն պատուից, բարևոք համարելով պահել միայն իւր մասնաւոր դպրոցը, որ նորան, ըստ ամենայնի, նիւթականապէս բաւականութիւն է տալիս եղել:

Աւելորդ չենք համարում այստեղ մէջ ըբերուլ Եկենեանի մի նամակը, որ նա գրել է Սալիբին այդ նիւթի մասին 1855 թուի փետրուարի 28-ին, որից մեր ընթերցողները կարող են մի կողմից գաղափար կազմել վարժապետի գրաբառագրութեան մասին, միւս կողմից էլ նորա և Սալիբի յարաբերութեան, ժամանակոր դպրոցի հանգամանքների և Նախիջևանի արքունի դպրոցի տեսչութեան գործի մասին: Չպէտք է մոռանալ, որ վարժապետի գրաբառագրութեան համբաւը տարածուած է եղել ոչ միայն Նախիջևանում, այլ և շատ տեղերում. նորան ճանաչել և նամակագրութիւն են ունեցել նորա հետ շատ նըշանաւոր հայ մարդիկ, որ թուում և Ս. Նաղարեանցը, որ 1846 թուին ուղարկելով նորան իւր «Обозрѣніе Исторіи гайканскоѣ письменности въ новѣйшія времена», հետևեալ լատինական ընծայականն է գրել վերան՝ «diro doctissimo Baptistae Egenian praeceptorі litierarum armenicarum opusculum suum qualecunque fit tanquam monumentum amoris etsevrentiae offert auctor»:

«Յառաջ քան զգնալ Ձերումդ Ազնուութեան ի թայգան, գրում է իւր յիշեալ նամակում» Անձնանուէր և Աղօթարար ծառայ Մկրտիչ վարժապետ Եկէնեանը գերազնիւ իշխան և Անզուգական բարեբար տէր խալիբին», անկարող եղէ առնել տե-

¹¹⁾ Մկրտիչ վարժապետ Եկէնեանի մեր յիշած ձեռագրերը այժմ պատկանում են Նախիջևանի թեմական դպրանոցի մատենադարանին:

սութիւն ընդ բարերար Տեառնդ իմում, և այժմ լսելով հաւաստեալ, թէ մին ի վարժապետաց թայդանու ույեզանիին, չէ՞վինով անուանեալ, և երկու վարժապետք Ռաստովու ույեզանիին Ֆէտորովսի և սովէլեվ, հետամուտ են գաղտ ի միմեանց առանձին խնդրադրովք առ Տիրէքթոն, լինել սմօթրիթէլ մերս ուսումնարանին, և տիրէքթոն ցուցեալ է զհաճութիւն իւր նշանակել զմին ի նոցանէ (ըստ ասից քրիվօնոսին):

Վասն որոյ և համարձակեցայ այսու յայտարարութեամբս գիմել առ Ձեզ և խոնարհաբար խնդրել զմիջնորդութիւն ձեր առ Տիրէքթոն վասն հաստատութեան առտնին դպրոցիս յորմէ միայն կայանայ բաւական պարուստ իմ ի ծերութեանս, և ոչ ի սմօթրիթէլութենէ, ուստի և ոչ ցանկամ այնք ծանր պաշտօնին, միայն թէ դպրոցն իմ մի արգելցի, զի գիտեմ ստուգիւ, թէ ի հաստատել աստանօր նորոյ սմօթրիթէլին՝ անդէն առաջին գործ նորա լինելոց է արգելուլ զիմ դպրոց, գրգռեալ ի նախանձուէ ուսուցչաց մերոց, որք չարաչար թշնամիք են ինձ:

Չայսոսիկ այսպէս յայտ առնելով, վստահացեալ կամ ի խնամս Ձերում մեծութեան. զի որպէս ցայսօր ժամանակի հրգօր պաշտպանութեամբ մարդասէր բարերարիդ ոչ ոք վնասեաց ինձ, նոյնպէս և այսուհետև բոլորասիրտ ապաւինութեամբ յանձն առնեմ զիս ի բարերար կամս Ձեր, որպէս և հաճոյ թուիցի Ձեզ այնպէս արասլիք, ես յամենայնի գոհ եմ յԱզնուական բարերարէդ:

Ո՛վ է եղել այդ տիրացու Սարգիսը, որին Նալբանդեանցը 1846 թուին գրել է իւր նամակները Ս. Էջմիածին: Իս Նախիջևանի Ս. Աստուածածին եկեղեցու քահանայ Տէր-Բարսեղն է եղել, որ իւր տիրացութեան ժամանակ կրել է Սարգիս անունը: Տիրացու Սարգիսը առաջ դեռ Ներսէս կաթողիկոսի առաջնորդութեան ժամանակ ծառայելիս է եղել Նախիջևանի հոգևոր կառավարութեան մէջ գործավարի պաշտօնով և արտաքսուել է պաշտօնից առաջնորդի հրամանով իւր կատարած մի յանցանքի համար: Սարգիսը դորանից յետոյ թողել, գնացել է Ս. Էջմիածին և այնտեղ իւր երկարատև օրինակելի ծառայութեամբ վանքում քաւել է իւր յանցանքը, այնպէս որ երբ Ներսէսը ընտրուել է կաթողիկոս, հասել է Ս. Էջմիածին և Ս. օծումն է ընդունել, տեսնելով նորա լաւ վարքն ու բարքը և իւր շրջապատողներից էլ նորա մասին միայն լաւ լսելով, ներել է նորան և ձեռնադրելով քահանայ, վերադարձրել Նոր-Նախիջևան: Այս մասին մենք կաթողիկոսի 1847 թուի

մայիսի 8-ին Պալիբի անունով արձակած կոնդակում կարդում ենք. «Սարգիս գրագիր հոգևոր կառավարութեան Նախիջևանայ երբեմն անցեալ քան զիւր սահման պարտաւորութեանց չարաչար յանդգնութեամբ մինչև վասահանաւ կարգել զինքն առաջնորդ մտաց մերոց ի կամս և ի հաճոյականս իւր և իւրոց խորհրդակցաց, արտաքսեցաք ի պարտաւորութեանց անտի գըրագրութեանց հոգևոր կառավարութեան, և մնաց նա անյոյս ի մեր ներողութեանց, յետ որոյ ինքնակամ գիմեալ նորա ի Ս. Էջմիածին և որպէս արգելական ինքնակամ սպասաւորեալ ի տաճարի Էջմիածնի դամս քանիս, հուսկ ուրեմն ի ժամանել մեր յԱթոռն սուրբ լուեալ վասն ընդ երկար պաշխարութեանց նորա բազում համբրութեամբ և համեստ կացութեամբ, ոչ անարժան դատեալ ներել նմա, հրաման ձեռնադրել զնա քահանայ ի վերայ եկեղեցեաց Նոր-Նախիջևանայ հայոց, և արձակեալ զնա վերադառնալ առ իւր ընտանիս, յայտնեալ զայս ամենայն ձերում արժանանձնութեան յանձն առնեմ ձերում անօրէնութեանց զի արժանադատութեամբ ձեր և անդամոց հոգևոր կառավարութեան նշանակեալ զնա քահանայ արժան դատեցեալ եկեղեցւոյ, նշանակեալիք և զժողովուրդ վասն նորա: Եւ մեք եմք և մնամք միշտ ձեզ օրհնարան և բարեցեակամ ի սրտէս:

Ստացել է արդեօք Նալբանդեանցն իւր նամակների պատասխանը տիրացու Սարգսից և թնչպէս է եղել, որ նորա նամակները բռնուել և ընկել են կաթուղիկոսի ձեռքը: Թէև մենք այդ մասին լիակատար և ճիշդ տեղեկութիւն չունեինք, բայց ի նկատի առնելով տիրացու Սարգիս Պոպովի Նախիջևանի հոգևոր կառավարութեան գրագիր դպիր Եղիա Տէր-Աստուածատրեան Շապոշնիկեանին Ս. Էջմիածնից 1846 թուի մարտի 29-ին գրած նամակի բովանդակութիւնը, որ նոյնպէս կցուած էր կաթուղիկոսի Պալիբին ուղարկած դատաքննութեան գործին, կարող ենք ամենայն հաւանականութեամբ ասել, նախ, որ Նալբանդեանցը պատասխան ստացել է, և այն բոլորովին հակառակ իւր սպասածին, երկրորդ, որ Սարգիսը նորա նամակները ուղարկել է Նախիջևան, իսկ նորա հակառակորդներն առել, յանձնել են հոգևոր կառավարութեան, ինչորելով հասցնել կաթուղիկոսի ձեռքը:

«Միքայէլ Լազարեան Ուստայեանց յինքննէ անուանեալ դպիր Սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյ ձերոյ, գրում է իւր այդ նամակում տիրացու Սարգիսը, ի 5 փետրուարի և ի 5 մարտի ներկայ ամի գրէ առ իս զերկոսին ազաւաղ գրութիւնս, յորս

յետ աղաւաղաբար գրելոյ զայլ և այլ ցնդաբանութիւնս, անարգէ անիծաբանութեամբ զհասարակութիւն ժողովրդեան հայոց Նոր-Նախիջևանայ և արհամարհէ բազում նախատանօք զգիտնական մկրտիչ վարժապետն Միմեծօնեան վասն կարգելոյ նորա յուսուցիչ ի Սրբազան վեհապետէն ի վերայ հոգևորականաց Նոր-Նախիջևանայ. ինքն գօլով եկեղեցական փոխանակ աղօթելոյ վասն ժողովրդեան Հայոց, զհաց նոցա ուտէ և անգոսնութեամբ անիծաբանէ զնոսա և արհամարհէ: Ափսոս անուան Սուրբ Լուսաւորչի և ժողովրդեան նորա, որ այնպիսի երախտամոռ անձն դպիր են կարգեալ. այժմ թէ ի մանկական հասակի գտեալ անհաւան ժողովրդականաց Հայոց անգոսնէ զնոսա անպատկառաբար, ի կատարելութեան իւրում ունի և զհաւատն քրիստոնէական ուրանալ և զամենայն առաքինական գործս նորա անգոսնել անհաւանութեամբ:

Գրութիւն նորա առաջին բացայայտ ծանուցանէ զլրբութիւն և զտգիտութիւն նորին, թէ և ինքն զինքն ջատագովէ անպատկառաբար և անգոսնութեամբ արհամարհէ զժողովուրդս և զվարժապետն, ոչ տեսանէ զպերան իւրում ական, զշիւղս այլոց ական նկատէ: Թողում զսկզբնաւորութիւն յառաջաբանութեան գրութեան նորա, որ վասն ժողովրդեան մերազնէից յանդգնեալ է խօսել, զջատագովութենէ իւրմէ արտազրեցից... Զայսոսիկ գրութիւնս կամէի թէպէտ առաքել այդր ի վերայ պատուելի անձանց, զի յանդիմանեսցեն զնա, բայց վասն ծանրութեան փոշտին այժմ ոչ կարողացայ. զկնի անցանել ժամանակաց անպատճառ ունիմ առաքել զայնս օրինաւոր եղանակաւ ի սաստ և ի խրատ յանդգնութեան նորա: Գրեցից ընդ նմին և առ ինքն զպատասխանի ոչ որպէս ինքն կամի, այլ որպէս ես կամիմ և իրաւունքն սուրբ օրինաց պահանջէ: Ոյր աղագաւ ինդրեմ ի սիրելութենէ ձերմէ պատուիրել նոյն անսահման դպրին, զի սանձեսցէ զյանդգնութիւն իւր և մի միւս անգամ այնպիսի անգոսնական և արհամարհական թուղթ վասն ժողովրդեան հայոց գրեսցէ առ իս և վշտացուսցէ զպանդխտութիւն մեր, քանզի և ոչ ճանաչեմ զնա ամենկին, թէ և ինքն որպէս ծանօթ և բարեկամ գրէ առ իս զայնոսիկ գրութիւնս:

Սրբազնագոյն Քահանայապետն ի 17 դեկտ. անցեալ ամի է ի Տփղիս, և ի 27 սոյն ամսոյ հրամանագրութեամբ նորին Վեհափառութեան ծաղկատար Սահակ եպիսկոպոս և Յովհաննէս Շահխաթունով եպիսկոպոսն և ձերունագարդ Պետրոս Պատգամաւոր վարդապետն եպիսկոպոսացուն ընդ առաջ զնացին անդ ի Տփղիս Սրբազնագոյն վեհապետին և մինչև ցարդ կան անդ:

Գալուստ նորին վեհափառ Տէրութեան աստ է իսկապէս առաջիկայ Ապրիլ ամսոյ և շնորհաբաշխ հայրապետական օծումն նորա յ9 Յունիսի յաւուր տօնի սրբոյ Կաթողիկէ էջմիածնի և մեռնորհնութիւն ևս ի նոյն աւուրսն անխափան: Ժամանակ բառինթիսի բարձրագոյն հրամանաւ փոխարքային կարճեցեալ է այժմս ի չորս աւուրս, որ ի սահմանագլուխս այսոցիկ տէրութեանց, բայց զկնի լինելոց է 24 ժամաչափ: Եւ ես եմ և մնամ վասն ձեր բարեացակամ միշտ ամենախոնարհ ծառայտիրացու Սարգիս Պոպով»¹⁵):

Նալբանդեանցի հետ միասին, ինչպէս մենք տեսանք կաթողիկոսի Սալիբին 1849 թուին տուած կոնդակի խօսքերից, դատաքննութեան է ենթարկուած լինում և Շապոշնիկեան ազգանունով մէկը: Այդ Շապոշնիկեանը Նախիջևանի Ս. Լուսաւորիչ եկեղեցու դպիր և տիրացու Սարգսի նամակի մէջ յիշուած Եղիա Տէր-Աստուածատրեանն է, որ վերոյիշեալ Սարգիս Պոպովի հոգևոր կառավարութիւնից արտաքսուելուց յետոյ, ստանձնել էր նորա պաշտօնը: Կաթողիկոսի Սալիբին ուղարկուած և դատաքննութեան համար իբրև գլխաւոր հիմք ընդունուած 15 թղթերից միայն երեքն էր վերաբերում Նալբանդեանցին, իսկ մնացեալ 12-ը վերաբերում էր հէնց այդ տիրացու Եղիային: Դորա գլխաւոր յանցանքը և դատի ենթարկուելու պատճառն այն էր, որ դա կամենալով ամուսնանալ, ընտրել էր իւր համար հարսնացու Մարիամ անունով մի օրինորդ Սարհատեան ընտանիքից, որ մի 2 հազար զուլի օժիտունէր և որի վերայ աչք ունէր և Ս. Լուսաւորչի միւս դպիր Սրապիօն Պրոտոպոպովը:

Սարհատեանը երկու եղբայր և մի քոյր էին, որոնք որբ էին մնացել իւրեանց ծնողների մահից յետոյ: Եղբայրներից մէկը—Կարապետը—ծառայում էր Մոսկուայում, միւսը—Յովհաննէսը—Պետտիգորսկում, իսկ Մարիամն ապրում էր իւր հօրեղբօր տանը Նախիջևանում: Փեսացու թեկնածուններից հօրեղբայրը հաւանում է Սրապիօնին և համաձայնում է նորան տալու Մարիամին և մերժում է Եղիայի առաջարկութիւնը:

¹⁵) Տիրացու Սարգիս Պոպովը—Տէր-Բարսեղ քահանան, մեր տէտ, խեղճ ու կրակ հոգևորականներից մէկն է եղել, ինչպէս այդ մասամբ կարելի է տեսնել և նորա նամակից: Գորա մասին մի զուարճալի պատմութիւն են անում Նախիջևանում: Ասում են, որ մէկ անգամ եկեղեցու զանգերը եռանդով հնչեցնելու միջոցին մի պառու կին պատահելով քահանային փողոցում, հարցնում է. «Տէրհայր, այսօր քիչ տօն է, որ այնպէս ուժեղ զանգահարում են»: Նա պատասխանում է. «Ապա, չգիտեմ, այսօր խեղճ տօնն է»: «Այնպէս է, մեծօրը շնորհաւոր, հեզնելով ասում է կինը և անցնում, զնում է:

Դպիր Եղիան տեսնելով, որ այդպիսի ուղիղ և ընդունուած ճանապարհով չհասաւ իւր նպատակին, մտածում է խորամանկութեամբ և գաղտագողի իրագործել իւր ցանկութիւնը. նա դիմում է օրիորդի իրան առաջ ընկեր եղած եղբայրներին և հասկացնելով նոցա, որ հօրեղբայրը չի ուզում Մարիամին իրան տալ, որովհետև աստուծոյ է փողը, համոզում է նոցա, որ նոքա գրեթէ հոգևոր Կառավարութեան և Կոնսիստորիային, թէ ինքեանք համաձայն չեն իւրեանց քրոջը Սրապիօնին տալու, թէ Մարիամը յօժար չէ նորան գնալու, այլ իւրեանց հօրեղբայրն է, որ հակառակ նորա կամքին ստիպում է նորան ամուսնանալու իւր չսիրած մարդու հետ, և այլն և այլն, և ինքն իսկ շարադրում, ուղարկում է Կարապետին գրկիք բողոքների օրինակները:

Բայց շուտով յայտնուում է կեղծիքը. պարզուում է, որ այդ բոլորը շինովի բան է, և ոչ հօրեղբայրն է խնայում փողը և ոչ Մարիամն է հակառակ իւր կամքին բռնաբար տուել Սրապիօնին: Զայրանում է Կարապետը և առնում, ուղարկում է դպիր Եղիայի գրած բողոքագրերի օրինակները Սրապիօնին, որ և այդ մասին եղած բոլոր գրաբուրքները յանձնում է հոգևոր Կառավարութեան, խնդրելով այդ բոլորը հասցնելու նորին վեհափառութեան բարեհայեցողութեան: Նախիջևանի հոգևոր Կառավարութիւնը Կոնսիստորիայի հրամանով այդ Եղիա դպրին էլ, ինչպէս Նալբանդեանցին, պաշտպանում է, ձգձգելով գործը, մինչև որ ժամանում է Նախիջևան վիճակաւոր Մատթէոս արքեպիսկոպոսը և 1850 թուի Մարտի 26-ին ուրիշ տիրացուների հետ միասին և այդ Եղիա Շապոշիկեանին ձեռնադրում է քահանայ, և այդ հակառակ կաթուղիկոսի պատուէրին, որ հրամայել էր դատի ենթարկել նորան և պատժել, և հակառակ Խալիբի ցանկութեան ու կամքին, որ կաթուղիկոսի կոնդակով¹⁶⁾:

¹⁶⁾ Այս Տէր-Եղիա Զարոշիքեանը, որին ուղղում է և տիրացու Սարգսի նամակը Նալբանդեանցի դէմ և որ Պատկանեանցի մասին այնպիսի շար վեհալուծիւն է տուել, բնական խելքից զուրկ մարդ չէր նա խօսում էր տրամաբանօրէն և կեանքի շարն ու բարբիին անտեղեակ չէր: Նա մանաւանդ լաւ ուսումնասիրել էր օրէնսդրութեան 10-երորդ հատորի յօդուածները, այնպէս որ միշտ կարողանում էր տեղին ու դէպքին հարկաւոր յօդուածները գտնել ու մէջ բերել: Սորա մասին է, որ պատմում են, թէ լուստոգի ներսէս կաթուղիկոսը ասել է. «Տէր-Հայր, քեզ ձեռնադրելու ժամանակ քո ձեռքը անտաբան են տուել, թէ „СВОДЪ ЗАКОНОВЪ“:

Քահանայանալը նորան չի ազատել Խալիբի և կաթուղիկոսի վրէժխնդրութիւնից, թէ և նա մեղայական էլ է տուել. նա կանչուել է Ս. Էջմիածին և ապատուել է խիստ պատժից, եթէ չենք ռիալուում, միայն իշխանութեան միջ-

քաղաքի հոգաբարձուների հետ միասին դատաւոր էր կարգուած այդ դատաքննութեան գործին:

Նորդուփեամբ: Մենք կարդացել ենք այն բողոքագիրը, որ նա գրել է նախարարութեան Խալիբի և հոգևոր իշխանութեան վերայ, բողոքագիր, որ մարդ կարդալով փշաքողում է, թէ դորանից յետոյ այլ ևս նա ինչպէս է կարողացել մնալ քահանայ...

Իւր այդ շատ ընդարձակ բողոքագրի մէջ նա օրէնքի բաղմամբիւ յօդուածներ մէջ բերելով, նախ, ճգնել է ազացոյց տալ, որ իւր կատարած յանցանքը մի շնչին բան է և չի վերաբերել հոգևոր իշխանութեան, երկրորդ, որ հոգևոր իշխանութիւնը իրաւունք չունի իրան հեռացնել իւր ընտանիքից և ասնել մէ այնպիսի հեռաւոր տեղ, ինչպիսին Ս. Էջմիածինն է, երրորդ, որ Խալիբը թշնամացել է իւր հետ, որովհետեւ ինքը հոգևոր կառավարութեան գործավար լինելու միջոցին տուել է Մատթէոս առաջնորդին Խալիբի առաջնորդի դէմ ու հակառակ դրած թղթերի համարները, իսկ հոգևոր իշխանութիւնը բարկացել է իւր վերայ, որովհետեւ ինքը ցոյց է տուել ո՛ւմ հարկն է այն անպատշաճ սխալները կայսերական տօների մէջ, որ թոյլ է տուել իրան ներմուծելու իւր հոգևոր իշխանութեան թոյլտուութեամբ Թիֆլիզում 1851 թուին հրատարակած զբացոյցի մէջ Պատկանեանը:

Ե. ՇԱՀԱԶԻՉ